

## ԱՆՎԱՆ ԱՈՒԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ» բաժնետերերին

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ, 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, ինչպես նաև նրանց առնչվող ծանոթագրությունները, պատրաստվել են «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք չձևափոխված կարծիք ենք ներկայացրել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2014թ. ապրիլի 14-ին: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի ազդեցությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներով: Հետևաբար՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

## Դեկլարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Դեկլարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից Աուդիտի Միջազգային Ստանդարտ (ԱՄՍ) 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

## Կարծիք

Մեր կարծիքով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմվել «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, բոլոր էական առումներով համապատասխանում են այդ ֆինանսական հաշվետվություններին, ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն:

Սրբուհի Հակոբյան  
Գործադիր տնօրեն

Արփինե Ղազարյան  
Աուդիտի ղեկավար

Դելոյթ Արմենիա ՓԲԸ  
14 ապրիլի, 2014թ.

